

**ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

*Դիտարկված է ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) կուտակման տեղամասերում երթևեկության անվտանգության բարձրացման միջոցառումների տեսակները: Տրված են պլանավորման կազմակերպման մեթոդները, նշանակումը, հիմնական խնդիրները և ՃՏՊ կուտակման տեղամասերում վթարայնության նվազմանն ուղղված ամենաարդյունավետ համալիր միջոցառումների ընտրումը:*

**Առանցքային բառեր.** ճանապարհատրանսպորտային պատահար, վթարայնություն, պլանավորում, կուտակման տեղամաս, երթևեկության անվտանգություն

Կախված ՃՏՊ կուտակման տեղամասերի վրա ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման միջոցառումների ծավալներից և համապատասխանաբար դրանց իրագործման հնարավոր ժամկետներից, ինչպես նաև ճանապարհային աշխատանքների ծրագրերի մշակման, համաձայնեցման և հաստատման ընդունված կարգից, պետք է տարբերել երթևեկության անվտանգության բարձրացման միջոցառումների պլանավորման հետևյալ երեք տեսակները.

- կարճաժամկետ (գործուն),
- տարեկան,
- միջնաժամկետ և երկարաժամկետ (ծրագրային):

ՃՏՊ կուտակման տեղամասերի վրա անվտանգ երթևեկության ապահովման միջոցառումների կարճաժամկետ (գործուն) պլանավորումն իրագործվում է ճանապարհի տեղամասերի, տարրերի և ճանապարհային կառույցների վրա նախատեսված ճանապարհային ցանցի պահպանման աշխատանքներ կատարելիս: Աշխատանքների պլանավորումը և ճանապարհային ցանցի տրանսպորտաշահագործական վիճակի թերությունների վերացումը պետք է կատարվեն դրանք հայտաբերելուց հետո սահմանված ժամկետներում՝ ճանապարհային աշխատանքների տեխնոլոգիաներին համապատասխան: Հայտնաբերված թերությունների վերացման աշխատանքների կատարման ընթացքում ճանապարհի համապատասխան տեղամասերում նախատեսված կարգով պետք է ժամանակավորապես սահմանափակել տրանսպորտային միջոցների երթևեկությունը՝ ապահովելով ճանապարհային երթևեկության անվտանգությունը: Ճանապարհային աշխատանքների կարճաժամկետ (գործուն) պլանավորման դեպքում անվտանգության բարձրացման միջոցառումների իրագործման գերակայությունը պետք է որոշի ՃՏՊ կուտակման վտանգավորության աստիճանով, որոնց վրա

հայտնաբերվել են երթևեկության անվտանգության պայմանների վրա ազդող թերությունները, ինչպես նաև այդ թերությունների վտանգավորության աստիճանով:

ՃՏՊ կուտակման տեղամասերում երթևեկության անվտանգության ապահովման միջոցառումների տարեկան պլանավորումն իրագործվում է միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ճանապարհների վրա ճանապարհային աշխատանքների տարեկան ծրագրերը կազմելիս: Նշված ծրագրերը հիմնավորվող փաստաթղթեր պատք է պարունակեն.

- տեղեկություններ ՃՏՊ կուտակման տեղամասերի մասին (վայրը, վտանգավորության աստիճանը, դրանց առաջացմանը նպաստող ճանապարհային գործոնների ցանկը),
- տեղեկություններ ՃՏՊ կուտակման տեղամասերում երթևեկության անվտանգության բարձրացման նախատեսված միջոցառումների մասին (անվանումը, անցկացման հասցեն և ժամկետը, աշխատանքների արժեքը):

Պետք է կազմվի ճանապարհների վիճակի արատաորոշման համակարգի կազմակերպման և ճանապարհային ցանցի վտանգավոր տեղամասերի հետազոտման պլան՝ դրանց առաջացման պատճառների և պայմանների որոշման նպատակով, ինչպես նաև մշակվի երթևեկության անվտանգության բարձրացման համապատասխան հակամիջոցառումներ [1, 2]:

ՃՏՊ կուտակման տեղամասերում երթևեկության անվտանգության ապահովման միջոցառումների միջնաժամկետ պլանավորումը կատարվում է ճանապարհային ցանցի բարելավման ու զարգացման ծրագրերի մշակման, ներդրումների հիմնավորման, ճարտարագիտական նախագծերի մշակման և ավտոմոբիլային ճանապարհների տեղամասերի նորոգման ժամանակ: ՃՏՊ կուտակման տեղամասերում երթևեկության անվտանգության ապահովման միջոցառումների միջնաժամկետ հիմնական խնդիրներն իրականացվում են ըստ հետևյալի.

- ճանապարհների և ճանապարհային կառույցների նորոգման, վերակառուցման և շինարարական աշխատանքների կատարման տնտեսական նպատակահարմարությունը և հերթականությունը որոշելիս, ճանապարհատրանսպորտային պատահարներից առաջացած սոցիալ-տնտեսական կորուստների հաշվառմամբ,
- ճանապարհների զարգացման ընտրված տարբերակի իրականացման արդյունքում ճանապարհատրանսպորտային պատահարների քանակի ավելացման և հետևանքների ծանրության աստիճանի նվազեցման հիմնավորմամբ,
- ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման չափանիշներին համապատասխան ճանապարհի ճարտարագիտական նախագծերում տեխնիկական լուծումների գնահատմամբ:

Բացի այդ, ՃՏՊ կուտակման տեղամասերում երթևեկության անվտանգության ապահովման միջոցառումների պլանավորման տեսակը որոշվում է՝ հաշվի առնելով նաև.

- ըստ թույլատրելի անվտանգության պայմանների՝ ճանապարհների շահագործական վիճակի պահանջների ապահովման գերակայությունը,
- ՃՏՊ կուտակման տեղամասերում տեխնիկատնտեսական հաշվարկներով հաստատված երթևեկության անվտանգության բարձրացման անհրաժեշտ ճանապարհային աշխատանքների անվանակարգը,
- ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման միջոցառումների ֆինանսավորման հաստատված ծավալները և դրանց իրացման համար անհրաժեշտ ժամկետները,
- միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման և զարգացման ծրագրերում ընդգրկված ճանապարհների նորոգման, վերակառուցման և շինարարության աշխատանքների կատարման հերթականությունը:

ՃՏՊ կուտակման տեղամասերի վրա երթևեկության անվտանգության ապահովման ճանապարհային աշխատանքների պլանավորման ժամանակ պահանջվում է յուրաքանչյուր այդպիսի տեղամասի համար ճանապարհային պայմանների բարելավման տարբերակների տեխնիկատնտեսական գնահատման հիման վրա ընտրել ամենաարդյունավետ համալիր միջոցառումները: ՃՏՊ կուտակման տեղամասերի վրա ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ամենաարդյունավետ համալիր միջոցառումներ ընտրելու համար անհրաժեշտ է.

- կատարել ՃՏՊ կուտակման տեղամասերի արատորոշում՝ նորմատիվային պահանջներին չհամապատասխանող ճանապարհի բնութագրերը և տարրերը հայտնաբերելու համար,
- ճանապարհային պայմանների և վթարայնության վիճակի տվյալների վերլուծության հիման վրա բոլոր այն հնարավոր միջոցառումների ցանկի կազմում, որոնք հնարավորություն կտան վերացնել ՃՏՊ-ի կուտակման դիտարկվող տեղամասերում դրանց առաջացմանը նպաստող անբարենպաստ ճանապարհային գործոնները,
- ՃՏՊ կուտակման յուրաքանչյուր տեղամասում ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման համալիր միջոցառումների տեխնիկատնտեսական համեմատության անցկացում,
- ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման ընտրված համալիր միջոցառումների պլանավորման շրջանակի որոշում՝ դրանց իրականացման և ներդրումների հիմնավորման անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի նախապատրաստման համար:

ՃՏՊ կուտակման հայտնաբերված տեղամասերում երթևեկության անվտանգության բարձրացման միջոցառումները պլանավորելիս պետք է հաշվի առնվեն վթարայնության մակարդակի կայունությունը և վտանգավորության աստիճանը: Ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման միջոցառումների ընտրման տարբերակային մշակման համար քննարկվողների թվում պետք է ներառել արմատականության տարբեր աստիճանի, այդ թվում՝ նաև համանման երթևեկության պայմաններով ճանապարհների տեղամասերում նախկինում իրականացված և արդյունավետություն դրսևորած միջոցառումներ: Հարակից տեղամասերում վթարայնության աճի կանխարգելման և երթևեկության միատեսակ պայմանների ստեղծման նպատակներով ՃՏՊ կուտակման տեղամասերում երթևեկության անվտանգության ապահովման միջոցառումներից բացի, անհրաժեշտ է ճանապարհի ողջ երկարության վրա նախատեսել ճանապարհաշահագործական ցուցանիշների ընդհանուր բարելավման աշխատանքների անցկացում [3]:

**Е.В.Варданын,  
С.А.Бурнусузян**

## **ПЛАНИРОВАНИЕ МЕРОПРИЯТИЙ ПО ПОВЫШЕНИЮ БЕЗОПАСНОСТИ ДОРОЖНОГО ДВИЖЕНИЯ**

*Рассмотрены виды планирования мероприятий по повышению безопасности движения на участках концентрации дорожно-транспортных происшествий (ДТП). Приведены методы организации планирования, назначение, основные задачи и выбор наиболее эффективного комплекса мероприятий, направленных на повышение безопасности дорожного движения.*

**Ключевые слова:** дорожно-транспортное происшествие, аварийность, планирование, участок концентрации, безопасность движения

**Ye.V.Vardanyan,  
S.A.Burnusuzyan**

## **PLANNING MEASURES FOR THE ROAD TRAFFIC SAFETY ENHANCEMENT**

*The types of traffic safety enhancement measures at the road traffic accidents accumulation stations are observed. The methods of planning organization, its assignments and key problems are introduced and the selection criteria of the most efficient and complex measures aimed at the reduction of emergency occurrence at the road traffic accidents accumulation stations are recommended.*

**Keyword:** motor vehicle collision, accident rate, planning, site of aggregation, traffic safety

## **Գրականություն**

1. **Дингес Э.В.** Методы планирования и оценки эффективности мероприятий по повышению безопасности дорожного движения. –М.: МАДИ, 2016. – 140 с.

2. Методические рекомендации по назначению мероприятий для повышения безопасности движения на участках концентрации ДТП. Метод. док., россавтодор Минтранс России. –М.: 2009. –72с.
3. **Чванов В.В.** Оценка эффективности мероприятий по повышению безопасности дорожного движения // Дороги и мосты: Сборник ст. ФГУП Росдор.НИИ. –М.: 2005. - Вып. N 22/2.

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակում:

**Վարդանյան Եղիազար Վահրամի, տ.գ.դ., դոց.** (ՀՀ, ք.Երևան) - ՃՀՀԱՀ, ռեկտորի առաջին տեղակալ-պրոռեկտոր, ակ. Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, ա.գ.ա., Շինարարական մեքենաներ և երթևեկության կազմակերպման ամբիոն, (+374) 10642099, (+374) 93914040, [vardanyan@ysuac.am](mailto:vardanyan@ysuac.am), **Բուռնուսյան Մլավիկ Արտավազգի, տ.գ.թ., պրոֆ.** (ՀՀ, ք.Երևան) - ՃՀՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., Շինարարական մեքենաներ և երթևեկության կազմակերպման ամբիոնի վարիչ, (+374) 10544998, (+374) 91459313  
**Варданян Егиазар Ваграмович, д.т.н., доц.** (РА, г.Ереван) – НУАСА, первый заместитель ректора-проректор, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. академ. Ал. Таманяна, с.н.с., кафедра Строительных машин и организации движения, (+374) 10642099, (+374) 93914040, [vardanyan@ysuac.am](mailto:vardanyan@ysuac.am), **Бурнусузян Славик Артаваздович, к.т.н., проф.** (РА, г.Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. акад. Ал. Таманяна, н.с., кафедра Строительных машин и организации движения, заведующий, (+374) 10544998, (+374) 91459313  
**Vardanyan Yeghiazar Vahram, doctor of science (engineering), associate prof.** (RA, Yerevan) - NUACA, first deputy rector-vice-rector, Research Laboratory of Architecture and Building by Academician Al. Tamanyan, senior researcher, Chair of Construction Machinery and Organization of Traffic, (+374) 10642099, (+374) 93914040, [vardanyan@ysuac.am](mailto:vardanyan@ysuac.am), **Burnusuzyan Slavik Artavazd, doctor of Philosophy (Ph.D) in engineering, prof.** (RA, Yerevan) - NUACA, Research Laboratory of Architecture and Building by Academician Al. Tamanyan, researcher, Head of chair of Construction Machinery and Organization of Traffic, (+374) 10544998, (+374) 91459313

Ներկայացվել է՝ 19.06.2017թ.

Ընդունվել է տպագրության՝ 04.09.2017թ.